

Հ. Խ. ԱՆԴԵՐՍԵՆ

ԱՆՃՈՒՆԻ ԲԱԴԻԿԸ



839.816.

Ա-58

ՊՍԵՆՆԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1936

839.81 LT

6 NOV 2011

Ա-58
պ.



Հ Ե Օ Ե

1010
41330

Այնքան լավ եր քաղաքից դուրս: Ամառ եր: Դաշտերում ար-
դեն վոսկու նման փալում եր հաճարը, կանաչին եր տալիս վար-
սակը, խոտը հավաքել ելին ու դեղ տվել: Կանաչ մարգագետնում
ման եր գալիս լերկարավոտ արագիլը և բլբլում լեզվատերեն, արդ
լեզուն նա սովորել եր իր մորից: Դաշտերից ու մարգագետիննե-
րից այն կողմ տարածվում ելին մեծ անտառներ, իսկ անտառնե-
րում կալին խոր լճեր:

Այո, լավ եր քաղաքից դուրս:



11 FEB 2013

ըրևոտ տեղ կանգնած եր հին ազարակը, շրջապատված ջրով լի խոր առուներով: Տան պատերից սկսած մինչև ջուրն աճում եր կռատուկը, այնքան բարձր, վոր փոքրիկ լերեխաներն իրենց ամբողջ հասակով կարող ելին կանգնել նրա ամենախոշոր տերևների տակ: Կռատուկի թալուտում ել այնպես խուլ եր ու վալրի, ինչպես ամենախիտ անտառում. և ահա, հենց այդտեղ, ձվերի վրա թուխս եր նստել բաղը: Նա վաղուց եր նստել և դա նրան բոլորովին ձանձրացրել եր, մանավանդ վոր նրան քիչ ելին այցելում, վորովհետև մյուս բաղերի համար ավելի դուրեկան եր լող տալ առուներում, քան թե նստել կռատուկների մեջ և կռնչալ նրա հետ միասին:

Վերջապես ձվերի կեղևներն սկսեցին ճաքճքել:

— Ճիվ, ճիվ, — լավեց ձվերի ներսից: Բոլոր ձվերի պեղնուցները կլանք առան ու գլխիկները դուրս հանեցին:

— Կռն, կռն, — ձայն ավեց բաղը: Բաղիկները մի կերպ դուրս սողացին ձվերի կեղևներից ու սկսեցին նայել շորս կողմը, դիտելով կռատուկի կանաչ տերևները: Մայրը նրանց չեւ խանգարում — կանաչ գույնն ոգտակար եր աչքերի համար:

— Վան, ինչքան մեծ ե աշխարհը, — ասացին բաղիկները:

Ինչ խոսք, վոր նրանց տեղն այժմ շատ ավելի ընդարձակ եր, քան այն ժամանակ, լերը նրանք դեռ իրենց ձվերի կեղևների մեջ ելին:

— Չլինի՞ դուք կարծում եք, թե ամբողջ աշխարհը հենց ես ե, վոր կա, — ասաց մայրը: — Ես ինչ ե վոր: Աշխարհը տարածվում ե հեռու-հեռու, այդուց ես կողմը, դեպի քահանայի դաշտը: Բայց լես իմ ծնված որից այնտեղ չեմ լեղել: Հը՛, հիմա բոլորդ եղտեղ եք: Յեվ նա վոտքի կանգնեց: — Ա՛խ, չե՛, բոլորդ չեք: Ամենամեծ ձուն դեռ մնում ե: Ո՛Ք, չե՛րը ես մի ձուտն ել դուրս կգա: Յես շուտով համբերութունս բոլորովին կկորցնեմ:

Յեվ նա նորից նստեց:

— Հը, դործերդ վճնց են, — հարցրեց մի պառավ բաղ, վոր լեկել եր նրան տեսնելու:

— Այ, մի ձու կա, վորից բան չի դուրս գալիս, — ասաց լերիտասարդ բաղը: — Մինչև հիմա ել ձուտը դեռ դուրս չի լեկել: Իսկ մի ես իմ փոքրիկներին նայիր: Ուղղակի հիանալի լեն բոլորն ել — իսկ և իսկ իրենց հորն են նման: Իսկ են փուշը գոնե մի անգամ չեկավ ինձ տեսնելու:

— Հապա ցույց տուր են ձուն, վորը դեռ չի ճաքել, — ասաց պառավ բաղը: — Հավատո՞ւ ինձ, վոր դա հնդկահավի ձու լե: Ճիշտ այդպես մի անգամ ել ինձ են խաբել: Յեվ ինչ գլխացավանք դառան ինձ համար եդ հնդկահավի ձուտերը: Ինչ արի-չարի, չկարողացա ջուր մտցնել նրանց. հոգիս դուրս լեկավ կռնչալով — չեն մտնում, պրծավ գնաց: Թող մի անգամ ել նայեմ: Իհարկե, են ե, վոր կա: Հնդկահավի լե: Չեռք վերցրու դրանից ու գնա բանիդ, մյուսներին լող տալ սովորեցրու:

— Չե, ավելի լավ ե լես մի քիչ ել նստեմ, — ասաց լերիտասարդ բաղը: — Եսքան վոր նստել եմ, մի քիչ ել կնստեմ:

— Դե նստիր, — ասաց պառավ բաղն ու գնաց:

Վերջապես մեծ ձուն ել ճաքեց:

— Ճիվ, ճիվ, — ճթճթաց փոքրիկն ու դուրս պրծավ ձվից: Բայց ինչքան մեծ ու անճոռնի լեր նա: Բաղը դիտեց նրան:

— Չարմանալի խոշոր ե, — ասաց նա: — Յեվ բոլորովին ել նման չե մյուսներին: Չլինի՞ իսկապես հնդկահավի ձուտ ե սա: Բայց դե, միկնուցն ե, վոնց ել վոր լինի, լես նրան պիտի ջուրը մըացընեմ, թեկուզ գոռով:

Մյուս որը հրաշալի լեղանակ եր. կանաչ կռատուկը հեղեղվել եր արևի ճառագավթներով: Բաղն իր ամբողջ ընտանիքով գնաց դեպի առուն: Թրը՛մի — և նա արդեն ջրի մեջն եր:

— Կռն, կռն, — կանչեց նա, և ձուտիկները մեկը մյուսի հետևից իրենց գցեցին ջուրը:

Մկզբում ջուրը նրանց բոլորովին ծածկեց, բայց նրանք իսկուհն իրենց գլխիկները դուրս հանեցին ջրի աակից, հրաշալի լողացին ջրի լերեսին: Վսնց ելին նրանց թաթիկները գնում - գալիս ջրի մեջ: Մինչև անգամ անճոռնի, գորշ ճուտիկն ել հետ չեր մնում մյուսներից:

— Ել վսնց կարող ե սա հնդուհավի ճուտ լինել, — ասաց բաղը, — տես, ինչ լավ լողում ե նա իր թաթիկներով: Յեվ ինչ ել ուղիղ ե պահում իրեն: Վսն, սա իմ իսկական տղան ե: Ասենք, նա իսկի ել ագեղ չի, լերը լավ ես նայում նրան:

Դե, շուտ արեք, հետևեցեք ինձ: Քիչ հետո լես ձեզ կներկայացնեմ մեր հասարակութանը — կգնանք թռչնանոցը: Միայն դուք միշտ ինձ մոտիկ կացեք, վոր ձեզ վոտի տակ չտան և մեկ ել գրուշացեք կատուներից:

Շուտով նրանք հասան թռչնանոց:

— Ո՛ր, սի, ինչ աղմուկ եր տիրում այնտեղ: Յերկու ընտանիք կովում ելին մի ոճածկան գլխի համար, վորը վերջիվերջո բաժին դարձավ կաավին:

— Աշխարհի բանն եսպես ե, — ասաց բաղը, և բերնից ջուրը գնաց. նա ինքն ել պատրաստ եր ոճածկան գլխի համը տեսնելու: — Դե, թաթիկներդ շարժեցեք, — ասաց նա իր ճուտերին: — կոնչացեք և բարև ավեք այն պառավ բաղին. այստեղ ամենից նշանավորը նա լե: Նա իսպանական ցեղից ե և դրա համար ել այդպես չաղ ե: Տեսնում եք նրա թաթի վրալի կարմիր շորի կտորը: Ի՛նչ սիրուն ե: Դա ամենամեծ նշանն ե, վորին կարող ե արժանանալ բաղը: Դա նշանակում ե, վոր նրան չեն ուզում կորցնել, այդ շորի կտորով նրան իսկուհն կճանաչեն թե մարդիկ և թե կենդանիները: Դե, լեկեք, շուտ: Թաթիկներդ հեռու պահեք իրարից: Բարեկիրթ բաղիկը պեսք ե իր թաթիկների ծայրերը շրջի գեպի դուրս, ինչպես իր հայրն ու մայրը: Ալ, այսպես, նայեցեք: Այժմ կուցրեք գլուխներդ և ասացեք՝ կոս:



Նրանք այդպես ել արին: Բայց մյուս բաղերը նայեցին նրանց և բարձրաձայն սասցին.

— Ահա քեզ ելի մի խումբ խուժաններ: Կարծես մենք քիչ ելինք: Հլա մի ես մեկին մտիկ, ինչ անճոռնի լե: Դրան արդեն մենք վնչ մի կերպ տանել չենք կարող:

Յեվ բաղերից մեկն իսկույն մոտ վազեց ու կտուցով խփեց նրա մեջքին:

— Չեռք քաշեցեք նրանից, — սասց մայր բաղը: — Չե վոր նա ձեզ վոչինչ չի արել:

— Վճնց չե, մի տես նա ինչ մեծ ե և տարորինակ, — Փշշաց մի չար բաղ: — Պարզ ե, վոր նրան պիտի մի լավ դաս տալ:

— Ի՞նչ լավ ճուտիկներ են, — սասց պառավ բաղը, վորի թաթին կարմիր կտոր ելին կապել: — Բոլորն ել շատ սիրուն են, բացի մեկից... Սա անհաշոդ ե, լավ կլինեք ձևափոխել նրան:

— Դա անհնարին ե, ձերդ վողորմածութուն, — պատասխանեց մայր բաղը: — Նա տղեղ ե, բայց բարեսիրտ ե: Յեվ վատ չե լողում, համարձակվում եմ ասել, մինչև իսկ, ավելի լավ ե լողում, քան մյուսները: Կարծում եմ ժամանակով կշտկվի և կփոքրանա: Նա շատ լերկար մնաց ձվի մեջ և այդ պատճառով ել այնքան հաշոդ չեղավ: — Յեվ նա քորեց ճուտի մեջքն ու հարդարեց փետուրները: — Բացի այդ, նա արու լե, իսկ արուլի համար սիրունութունն այնքան ել պետք չե: Կարծում եմ, վոր լերը նա մեծանա, ուժեղ կլինի ու ճանապարհ կհարթի իր համար:

— Մյուս ճուտիկներդ շատ լավիկներն են, — սասց պառավ բաղը: — Դե, հիմի ձեր բանին կացեք և լեթե ոճաձկան գլուխ կընկնի ձեռներդ, կարող եք բերել ինձ մոտ:

Յեվ ահա, բաղիկներն անցան իրենց գործին, կարծես իրենց սեփական տանը լինելին: Միայն այն խեղճ բաղիկին, վոր ամենից ուշ եր դուրս լեկել ձվից և այնպես տղեղ եր, բոլորն ել նեղում ելին: Նրան խփում ելին կտուցով, հրում դես-դեն ու չարացնում վոչ միայն բաղերը, այլ նույնիսկ հավերը:

— Ես ի՞նչ մեծն ե, — ասում ելին նրանք: Իսկ հնդու աքաղաղը, վոր ծնվել եր խթանները վոտներին, և դրա համար ել իրեն կայսր եր լերևակալում, ուռեց, փքվեց և, առագաստները պարզած նավի պես սլացավ դեպի բաղիկը, դիտեց նրան մոտիկից ու բարկացած բլբլաց: Նրա կատարն այնպես լցվեց արյունով: Խեղճ բաղիկն ուղղակի չգիտեր թե ինչ անի, վորտեղ մանի: Միթե նա հենց այդպես անճոռնի պիտի ծնվեր, վոր այժմ բոլորը ծիծաղելին նրա վրա:

Այդպես անցավ առաջին օրը, իսկ հետո ավելի վատ լեղավ: Բոլորը հալածում ելին խեղճ բաղիկին, մինչև իսկ իր քույրերն ու լեղբայրները չարացած ասում ելին նրան.

— Կատուն տանի քեզ, անտանելի հրեշ, — իսկ մայրն ավելացնում եր. — «Յերանի աչքս քեզ չտեսնի»: Բաղերը նրան փետրահան ելին անում, հավերը կտցով խփում, իսկ հավերին կուտ ավոյ աղջիկը վոտքով դեն եր հրում նրան:

Վերջապես բաղիկը չդիմացավ. վազեվազ անցավ բակի միջով ու թռավ ցանկապատից դուրս: Փոքրիկ թռչունները վախեցած դուրս թռան թփերից:

— Այնքան անճոռնի լեմ լես, վոր նրանք ինձնից վախեցան — մտածեց բաղիկն ու աչքերը խփած առաջ եր վազում, մինչև հասավ ճահճին, վորտեղ վայրի բաղերն ելին ապրում: Այդտեղ նա պառկեց ամբողջ գիշերը: Նա հոգնած եր և ախուր:

Առավոտյան վայրի բաղերը դուրս լեկան իրենց բներից և տեսան նոր ընկերոջը:

— Սա ի՞նչ թռչուն ե, — հարցրին նրանք:

Բաղիկը շրջվում եր ու գլուխ տալիս ամեն կողմ, ինչքան վոր շնորհք ուներ:

— Ինչքան անճոռնի լես դու, — սասցին վայրի բաղերը: — Ասենք դա մեր գործը չե, միայն չլինի թե մտածես ազգական դասնալ մեզ:

Խեղճ բաղիկ: Կարող եր լերևե այդպիսի բան անցնել նրա գլխով: Հենց այնքան լիներ, վոր նրան թուլլ տալին նստել այդ տեղ լեղեգների մեջ և շուր խմել ճահճից:

Նա այդպես նստեց ճահճում լերկու որ: Յերրորդ որն այդտեղ լեկան լերկու վայրի սագեր: Վաղուց չեր, վոր նրանք ձվից դուրս ելին լեկել, դրա համար ել շատ մեծամիտ ելին:

— Լսիր, բարեկամ, — ասացին նրանք, — դու այնքան անճուռնի լես, վոր, ճիշտն ասած, մեզ դուր ես գալիս: Կուզենամս մեզ հետ թափառել և ազատ թռչուն դառնալ: Այստեղ, մտաիկ մի ուրիշ ճահիճ ել կա, այնտեղ ապրում են լավիկ-լավիկ վայրի սագեր — խաթուններ: Նրանք կարողանում են ասել՝ «ոսպ, ոսպ»: Դու այնքան անճուռնի լես, վոր մեծ հաջողութուն կունենաս նրանց մոտ:

Թը՛խկ, թը՛խկ, — հանկարծ մի ձայն անցավ ճահճի վրայով, և լերկու վայրի սագերն սպանված ընկան լեղեգների մեջ: Ձուրը ներկվեց նրանց արյունով: Թը՛խկ, թը՛խկ, — նորից լավեցին կրակոցները, ու լեղեգների միջից դուրս թռավ վայրենի սագերի մի ամբողջ լերամ: Հրացանները շարունակ կրակում ելին: Վորսորդները չորս կողմից շրջապատեցին ճահիճը: Նրանցից մի քանիսը բարձրացան ծառերը, վորոնց ճուղերը կախված ելին ճահճի վրա: Կապտավուն ծուխն ամպի նման ծածկել եր ծառերն ու փովել ջրի լերեսին: Ճահճում վազվզում ելին վորսորդական շները՝ շրոփ, շրոփ: Յեղեգն ու մյուս խոտերն որորվում ելին այս ու այն կողմ: Խեղճ բաղիկը վախից վոչ կենդանի լեր և վոչ մեռած: Նա հենց նոր եր ուզում թաղցնել գլուխը թևի տակ, վոր հանկարծ ուղիղ նրա առաջ լերևաց վորսորդական մի շուն: Շան լեզուն դուրս եր ընկած, իսկ չար աչքերը պսպղում ելին: Նա իր լերախը մոտեցրեց բաղիկին, բացեց սուր ստամներն ու... շրոփ, շրոփ — հեռացավ նրանից:

— Ձեռք չավեց, — մտածեց բաղիկը և ազատ շունչ քաշեց: — Յերևի լես այնքան անճուռնի լեմ, վոր մինչև անգամ շունն ել ե գզվում ինձնից:



Նա թագնվեց լեղեղները մեջ. նրա գլխի վրայով շարունակ սվավում եր կոտորակը. հրացանները կրակում ելին:

Հրացանաձգութունը դադարեց միայն իրիկնադեմին: Բայց բազիկը դեռ լեղկար ժամանակ վախենում եր շարժվել տեղից: Անցավ մի քանի ժամ: Վերջապես նա սրտասպնդվեց, տեղիցը վեր կացավ, զգուշութամբ նայեց չորս կողմն ու սկսեց փախչել դաշտերով ու մարգագետիններով: Քամին այնքան ուժեղ եր, վոր բազիկը հազիվ եր կարողանում շարժվել:

Այդպես վազելով նա գիշերը հասավ մի աղքատ խրճիթի: Խրճիթն այնքան խարխուլ եր, վոր պատրաստ եր վալը ընկնելու, միայն չզիտեր, թե վոր կողմն ընկնի, այդ պատճառով ել դեռ մնում եր կանգնած: Քամին քիչ եր մնում վեր թոցներ բազիկին, և նա ստիպված եր իր պոչով հենվել գետնին:

Նա նկատեց, վոր տնակի դռան ողակներից մեկը, բախտի բերմամբ, դուրս ե ընկել և դուռն այնքան ե թեքվել, վոր նրա արանքից կարելի չե ազատ ներս սողալ: Այդպես ել արեց:

Տնակում ապրում եր մի պառավ՝ իր կաավի և հավի հետ: Կաավին պառավը «վորդակ» եր անվանում. սա կարողանում եր



մեջքը կուացներ, մլավել և, մինչև անգամ, կայծեր արձակել, բայց դրա համար հարկավոր եր նրա բուրդը շոջել հակառակ ուղղութամբ: Հավը փոքր ու կարճ վոտներ ուներ և դրա համար ել նրան այդպես ել կանչում ելին՝ «կարճուղանի»: Նա ձու չեր ածում և պառավը սիրում եր նրան, ինչպես իր աղջկան:

Առավոտն ոտար բազիկին նկատեցին, կատուն սկսեց մոռալ, իսկ հավը՝ կշկշալ:

— Ի՞նչ կա եղտեղ, — հարցրեց պառավը, նայեց չորս կողմն ու նկատեց բազիկին, բայց, վորովհետև լավ չեր տեսնում, կարծեց թե դա մի չաղ բաղ ե, վոր պատանմամբ հեռացել ե տնից:

— Ես ինչ լավ չեղավ, — ասաց պառավը: — Սրանից հետո լես բազի ձվեր կուսենամ, լեթե միայն սա արու բաղ չե: Ե՛հ, կտեսնենք, կփորձենք: Յեվ բազիկին պահեցին, վոր փորձեն: Բայց անցավ մոտ չերեք շաբաթ, իսկ ձու չկար ու չկար:

Տան իսկական տերը կատուն եր, տանտիկինն ել՝ հավը. նրանք լերկուսն ել միշտ ասում ելին. «Մենք ենք ու ամբողջ աշխարհը»: Նրանք կարծում ելին, թե իրենք ամբողջ աշխարհի կեսն են, այն ել ամենալավ կեսը: Իսկ բազիկին թվում եր, վոր դրա մասին կարելի չե և մի ուրիշ կարծիք ունենալ: Սակայն հավը թույլ չեր տալիս այդպիսի բան:

— Դու կարող ես ձու ածել, — հարցրեց նա բազին:

— Վո՛չ:

— Դե, ուրեմն լեզուդ քեզ պահիր:

Իսկ կատուն հարցրեց.

— Կարող ես դու մեջքդ կուացներ, կայծեր արձակել ու մոռալ:

— Վո՛չ:

— Ուրեմն կարծիքդ քեզ պահիր, լերը խելոքներն են խոսում:

Յեվ բազիկը, քիթը կախած, քաշվեց մի անկյուն ու նստեց:

Հանկարծ նրա միտն ընկան թարմ ողբ, արևը և նա սաստիկ ցանկացավ լող տալ: Նա չզիմացավ և այդ մասին ասաց հավին:

— Ի՞նչ ե պատահել քեզ, — հարցրեց նա: — Գործ չունես, դրան համար ել հագար ու մի մտքեր ես անում: Հապա ձու ածա կամ մոռա, այն փամանակ խելքդ գլուխդ կգա:

— Ա՛խ, ինչքան լավ ե լող տալը, — ասաց բաղիկը, — գիտես ինչ մեծ բավականութուն ե՝ գլխիվար սուզվել ջրի խորքը:

— Ա՛յ քեզ բավականութուն, — ասաց հավը: — Դու բոլորովին խելքդ կորցրել ես: Ա՛յ, հրես կատուն, վոր իմ ճանաչածներից ամենքից խելոքն ե, մի հարցրու՛ նա ինքը սիրո՞ւմ ե ջրի մեջ լող տալ ու ջրի տակ մտնել: Դեռ իմ մասին չեմ խոսում: Վերջապես, հարցրում եր պառավ տիրուհուն, աշխարհիս լերեսին նրանից ել խելոքը չկա: Նա քեզ կասի՝ կուզենամ արդյոք գլխիվար սուզվել ջրի խորքը:

— Դուք ինձ չեք հասկանում, — ասաց բաղիկը:

— Յեթե մենք չենք հասկանում, ուրեմն ել ո՞վ կհասկանա քեզ: Ինչ ե, դու ուզում ես կատվից և մեր տանտիրուհուց ել խելոք լինե՛լ, չխոսենք դեռ իմ մասին: Հիմարութուններ մի արա, ալ շնորհակալ լեղիր այն բանի համար, վոր արել են քեզ: Քեզ աեղ են տվել, ապրեցրել. դու մի աջալիսի հասարակութւան մեջ ես ընկել, վորտեղ կարող ես մի վորեւե բան սովորել: Բայց դե քո գլուխը դատարկ ե և քեզ հետ խոսել չարժե: Հավատա ինձ, լես քո լավն եմ ցանկանում, դրա համար ել քեզ խրատում եմ: Հենց դրանով ե, վոր ճանաչվում ե իսկական բարեկամութունը: Աշխատիր, ուրեմն, ձու ածել կամ մոռալ ու կալծեր արձակել:

— Յես, կարծում եմ, ավելի լավ ե գնամ այստեղից, միկնուլն ե թե ուր, — ասաց բաղիկը:

— Գնում ես, գնա՛, — պատասխանեց հավը:

Յեվ բաղիկը գնաց: Նա լողում եր ջրերում ու գլխիվար սուզվում ջրի տակ: Բայց առաջվա նման, ով նրան տեսնում եր, սկըտում եր ծիծաղել նրա անձուռնիութւան վրա:

Վրա հասավ աշունը, ծառերի տերևները դեղնեցին, ապա կարմրեցին: Քամին քշում եր տերևներն ու պտտում ողի մեջ: Յեղա-



նակը ցրտեց: Խիտ ամպերից լերբեմն կարկուտ, լերբեմն ել ձյուն եր թափվում լերկրի վրա, իսկ ցանկապատի վրա նստել եր ագ-
ռաֆն ու ցրտից կռավում եր կոկորդով մեկ: Բը՛ու, քիչ ե մնում
սառես, լերբ մտածում ես այսպիսի ցրտի մասին: Վաստ եր խեղճ
բաղիկի դրուժուներ:

Մի անգամ, լերեկոյան դեմ, լերբ դեռ արևը փայլում եր լեր-
կրնքում, անտառի լեռների թռավ հրաշալի, մեծ թռչունների մի
ամբողջ լերամ: Բաղիկը լերբեք չեք տեսել այդպիսի գեղեցիկ թռու-
չուններ, — նրանք բոլորը ձյունի նման սպիտակ ելին, լերկար ու
ձկուն վզերով: Դրանք կարապներ ելին: Ինչ վոր տարրերնակ ձայ-
ներ հանելով, նրանք թափահարեցին իրենց սքանչելի, լերկար թե-
վերն ու սառը մարգագետիններից թռան դեպի տաք լերկրներ, կա-
պույտ ծովից այն կողմը: Նրանք բարձրացան վեր, շատ վեր, իսկ
խեղճ բաղիկը բռնվեց անհասկանալի մի տագնապով: Նա հովի նը-
ման պտույտ գործեց ջրի մեջ, պարզեց վիզն ու նույնպես բղա-
վեց, — և այնքան բարձր ու տարրերնակ, վոր ինքն ել վախեցավ:
Ախ, նա չեք կարողանում աչքը կարել այդ գեղեցիկ ու բախտա-
վոր թռչուններից. իսկ լերբ նրանք բոլորովին անհայտացան, նա
սուզվեց մինչև ջրի հատակը, նորից դուրս լողաց և դեռ չեք կա-
րողանում ուշքի գալ: Բաղիկը չգիտեր, թե դրանք ինչ թռչուններ
են, չգիտեր՝ դեպի ուր են թռչում, բայց նա նրանց սիրեց, ինչ-
պես վոչ վոքի աշխարհիս լերեսին չեք սիրել: Նա չեք նախանձում
նրանց սիրունությունը, նրա գլխով ել չեք անցնում, վոր ինքը
կարող ե նրանց նման գեղեցիկ լինել: Նա ուրախ ու բախտավոր
կլիներ, լեթե գոնե բաղբը չհալածելին նրան: Խեղճ անձուռի բա-
ղիկ:

Վրա հասավ ցուրտ, շատ ցուրտ ձմեռը: Բաղիկը պետք ե
անընդհատ լողար, վորպեսզի ջուրը չսառչեր բոլորովին: Բայց այն
լճակը, վորտեղ նա լողում եր, ամեն գիշեր ավելի ու ավելի լեր
փոքրանում: Սաստիկ ցրտերից մինչև իսկ սառույցը ձաքճքում եր:

Բաղիկն անդադար գործում եր թաթիկներով, բայց, վերջապես,
բոլորովին ուժից ընկավ, վոտները պարզեց ու սառեց, կպավ սա-
ռույցին:

Առավոտյան վաղ այդտեղից անցնում եր մի գյուղացի: Նա
տեսավ սառույցին կպած բաղիկին, սառույցը կտարեց իր փայտյա
կոշիկով ու կիսամեռ թռչունին տարավ տուն, իր կնոջ մոտ: Բա-
ղիկին տաքացրին:

Յերեխաներն ուզում ելին խաղալ նրա հետ, իսկ նրան թվաց,
թե ելի պիտի իրեն վիրավորեն: Վախից նա իրեն գցեց մի կողմ
և ուղղակի ընկավ կաթնով լի կովկիթի մեջ: Կաթը թափվեց: Տան-
տիկինը ճչաց ու թափահարեց ձեռքերը, իսկ բաղիկը վազեց տան
մեջ այս ու այն կողմ, թռավ ընկավ լուղի տակառի մեջ, այդտե-
ղից՝ ալյուրի տակառի մեջ: Ով գարմանք, ինչի նման դարձավ
նա:

Կինն անխի ունելիքը ձեռքին վազում եր նրա լեռներից, լերե-
խաները վազվզում ելին, հրելով ու վայր գցելով իրար, քրքշում
ելին ու ճվճվում: Լավ ե, վոր դուռը բաց եր — բաղիկը դուրս
թռավ, իրեն գցեց թփերի մեջ, նոր լեկած ձյունի վրա և լերկար
ժամանակ գրեթե անզգա մնաց այնտեղ պառկած:

Շատ տխուր կլիներ պատմել բոլոր այն նեղություններն ու
դժբախտությունները, վոր կրեց նա այդ դաժան ձմռանը:

Իսկ լերբ արևը նորից տաքացրեց լերկիրն իր տաք ճառա-
գալթներով, նա պառկած եր ճահճում, լեղեգների մեջ: Արտուտ-
ներն սկսեցին յերգել: Յեկավ գարունը:

Բաղիկը թափարահեց թևերն ու թռավ: Առաջվանից ինչքան
ուժեղ ելին նրա թևերը: Նրանք ազնկեցին ու արագ նրան առաջ
սլացրին: Դեռ նրա ուշքը գլուխը չեք լեկել, լերբ տեսավ, վոր
ինքը մի մեծ այգում ե: Բոլոր խնձորենիները զարգարվել ելին
ձաղիկներով. անուշահոտ լասամանն իր լերկար ու կանաչ ձյուղե-

ըր կռացրել եր ներքևում վոլորվող առվի վրա: Ա՛խ, ինչքան լավ եր այստեղ, և ինչպես եր փչում գարնան բուրմունքը:

Հանկարծ լեղեգնուտի թավուտից դուրս լողացին լերեք հրաշալի սպիտակ կարապներ: Նրանք այնքան թեթև ու կոկիկ ելին լողում, վոր կարծես սահում ելին ջրի լերեսով: Բաղիկը ճանաչեց այդ գեղեցիկ թռչուններին և նրան պատեց մի ինչ վոր անհասկանալի տխրութուն:


— Կթռչեմ նրանց մոտ, դեպի այդ վե՛՛ս թռչունները: Նրանք հավանորեն կսպանեն ինձ կտուցներով, քանի վոր լես, մի անճուռնու մեկը, համարձակվեցի մոտենալ նրանց: Բայց ինչ ուզում ե լինի: Ավելի լավ ե մեռնել նրանց հարվածներից, քան թե լենթարկվել հավերի ու բաղերի կրճմթոցին, թռչնապահի աքացիներին և տանել ձմեռվա ցուրտն ու քաղցը:

Յե՛վ նա թռավ ջուրը, լողաց դեպի գեղեցիկ կարապները, վորոնք, տեսնելով նրան, շարժեցին թևերն ու նույնպես լող տվին դեպի նա:

— Սպանեք ինձ, —ասաց խեղճ բաղն ու գլուխը կռացրեց, սպասելով մահվան: Բայց ինչ տեսավ նա հայելու պես պարզ ջրի մեջ: Նա տեսավ իր սեփական պատկերը, բայց նա այժմ մուգ-վոր-շագուհն անճուռնի բաղ չեր, այլ սպիտակ կարապ: Հո փորձանք չի, վոր կարապի ձվի միջից դուրս լեկածը աշխարհ ե լեկել բաղի բընում:

Այժմ բաղիկը նույնիսկ ուրախ եր, վոր այնքան վիշտ ու զըրկանք կրեց: Նա շատ եր տառապել և զրա համար ել կարող եր ավելի լավ գնհատել իր լերջանկութունն ու այն գեղեցկութունը, վոր շրջապատում եր նրան: Իսկ մե՛ծ կարապները լողում ելին նրա շուրջն ու շոյում նրան իրենց կտուցով:

Այդ ժամանակ մի քանի փոքրիկ լերեխաներ վաղեցըն այդի:



2105



Նրանք սկսեցին հացի փշրանքներ և հատիկներ գցել կարապներին իսկ նրանցից ամենավոքորը կանչեց:

— Մի նորն է լեկել, նորն է լեկել:

Յեվ մյուսներն էլ ձաջն տվին նրա հետ միասին:

— Նորն է, նորն է:

Յերեխաները ծափ ելին տալիս և ուրախութունից պարում: Հետո նրանք կանչեցին իրենց հորն ու մորը և նորից սկսեցին հացի և կարկանդակի կտորներ գցել ջուրը: Թե յերեխաները և թե մեծերն ասում ելին.

— Նոր կարապը բոլորից լավն է: Ինչքան գեղեցիկ է նա ու ջահել:

Յեվ մյուս կարապները գլուխ խոնարհեցին նրա առաջ:



Իսկ նա բոլորովին շփոթվեց և գլուխը թագցրեց թևի տակ,
ինքն ել չիմանալով, թե ինչն է: Նա մտաբերեց այն ժամանակը,
լերբ բոլորը ծիծաղում ելին նրա վրա և հալածում նրան: Իսկ այժմ
բոլորն ասում են, վոր նա զեղեցիկ կարապետների մեջ ամենազեղեցիկն
է: Յասամանի թուփը կռացնում եր իր անուշահոտ ճյուղերը զեպի
նա, իսկ արևը փայլում եր այնքան տաք, այնպես պայծառ... Յեվ
ահա նրա թևերն աղմկեցին, վայելուչ վիզն ուղղվեց, իսկ կրծքից
դուրս թռավ ցնծության ճիչը:

— Վնչ, այսպիսի լերջանկություն մասին լերագել անգամ չելի
կարող, լերբ զեռ անճուռնի բազիկ ելի:



ՀՀ Ազգային գրադարան



NL0390085

Նկարներ՝ Ե. ՍՍՅՈՆՆՈՎԻ
Թարգմ. Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ



Г. Х. АНДЕРСЕН
ГАДЖИИ УТЕШОК

Гиз СССР, Ереван, 1936 г.

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան. Տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան, սրբագրիչ՝ Ա. Ազգամանյան
Գլավիճի լիազոր Կ. - 1077, հրատ. 3657, պատ. 439, տպում 5000
Պետհրատի տպարան, Յերեվան, II Գնունի, 4